ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE5F-4188-4E48-85B5 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/7136/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

01 հուլիսի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Մառա և Դուստրեր» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 29.05.2026թ. հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Մառա և Դուստրեր» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. հունիսի 22-

ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 29.05.2026թ. հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի (դատավոր Ս. Երիցյան) 2026թ. հունիսի 26-ի որոշմամբ վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. հունիսի 29-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. հունիսի 30-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2026թ. հունիսի 22-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մառա և Դուստրեր» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 29.05.2026թ. հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/7136/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հուլիսի 31-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.07.01 12:45:28 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am